

չին մեծութեան: Եյս փոքրիկ հերթիկը հաջիւ աղօտ լուսով լուսաւորում է այդ՝ երբեմն շատ երկար բակը, ուր անծանօթ այցելուն խոր-խափելով է առաջ գնում:

Պատահաններ չլինելու և հերթիկների փոքրութեան զխաւոր պատճառն ապակի չգործածելն է. ցերեկը բաց են անում լուսամուտի տեղ թողնուած այդ ծակերը և գիշերը խոտով ու շորով ծածկում:

Բակը դնում են լուծ, արօր, տաշտ, խուշիկ, աթար և այլն: Բակից բացւում են դռներ գէղի տուն, գէղի դռ և գէղի եռաղը:

ՏՈՒՆ.

Տունը բաղկացած է երկու բաժանմունքից, — տուն և Թնդբճափ:

Տունը միշտ քառակուսի է լինում, պատերի երկարութիւնը 15—24, իսկ բարձրութիւնը $2\frac{1}{2}$ —3 արշին է լինում: Պատերի մէջ ոչ մի պատահան չունի, միայն մի դուռ բացւում է գէղի բակը:

Եւածիկը դ ա ռ ա ռ ու ճ է, այսինքն միշտ անկիւնների հանգէլ, միմեանց զիայ ձգւում են քառանկիւնի տաշտած գերաններ, որոնք հետզհետէ բարձրանալով և կարճանալով, վերջանում են մի քառակուսի արշին մեծութեան բացուածք թողնելով, որ կոչւում է հերթիկ (պատահան):

Տան մէջ, պատերին կից լինում են զարակներ, որոնց վերայ շարւում են կամ և պղնձէ տմաններ, փայտէ գշեր և այլն: Դարակների տակ գրւում են կարտաներ, որոնց վրայկեցնում են շատ անգամ ձու քսելով և որոնցից շատերը յաճախ գատարկ են լինում:

Տան մի անկիւնում յաճախ գրւում է լինում ալիւրի տմբարը, վերան կամ կողքը հացի տաշտը:

Թնդբճափը տան յատակից $\frac{1}{2}$ —1 արշին բարձր և յաճախ բարական է լինում: Միտ ծածկը ևս տան ծածկի պէս զանաւորն է, միայն փոքր ինչ ցածից գրած: Ուղիղ մէջ տեղում թողնուած է 1—1 $\frac{1}{2}$ քառակ. արշին մեծութեան հերթիկ: Հերթիկի անմիջապէս տակը, դեանի մէջ մինչև բերանը թաղւում է Թոնիբը, որի սնուածքը միշտ նայում է գէղի դուռը, որպէսզի այստեղից քամի խողայ: Թոնիբի շուրջը կոչւում է Թնդբափ: Պատերի մէջ սովորաբար լինում են երկու փոքրիկ տեղուռ պահարան, որոնց մէջ գրւում են Թթիւորը, բաթաթը, զրգրնակը, Թաթակիշը, դատարակը և այլն: Մի անկիւնում էլ գրւում է լինում լիւն ու ակիշը:

ԳՈՒ.

Գոմբը լինում են $2\frac{1}{2}$ մինչև 3 արշ. լայնութեան և 3 մինչև 5 սաժէն երկարութեան: Պատերի բարձրութիւնը մի սաժէն է լինում, ծածկը գոլպաշի:

Գոմի երկարութեամբ, երկու պատերին կից, գետնից մի արշին բարձր. $\frac{1}{2}$ արշ. լայնութեան և $\frac{1}{4}$ արշին խորութեան ժուրք է շինուած. Սրանց վերայ, միմեանց բաւական ժառ, կապուած են $\frac{1}{2}$ արշին երկարութեան բարակ չղթայ կամ թոկ—(կապ),—որանց ծայրին տմբայրած է փայտէ բարձր $\frac{1}{2}$ արշնաչափ ծամ, փայտաւ աղեղնանէ նիւղ, որը տնց են կացնում կենդանիներէ վեր, և ծամըցաթոփ—կաշկապ—երկու ծայրերը բիւ ժառ միացնում: Մուտքներէ առջեւ մի մի սառէն լայնութեան տեղ յատկացրած է կենդանիներ կապելու, որը և կոչուած է զաւղբբ մ: Սրանց առջեւից ձգուած է $\frac{1}{4}$ արշին լայնութեան արիւ:

Երկու զաղբբներէ միջի տարածութիւնը, որ ժառաւարապէս մի սառէն է լինում և զաղբբներէց 3 վերջով ցածր է, քարուած է և կոչուած է կամիւրէս կամ տափնէրէս:

ԹԵՆ.

Գոմի մի ծայրում, սոփորաբար զտան հանդէպ, գտնուած է օգան. որա մէջ տեղում, պատի մէջ գտնուած է մի բուխարի, որ գետնից $\frac{1}{2}$ արշին բարձր է լինում: Բախարու երկու կողմից, միմեանց բարձրութեամբ ձգուած են $1\frac{1}{4}$ արշին լայնութեան երկու թաղթ, որ կոչուած են օտա ր: Հարուստների օգաներում սառնների կողքերին $\frac{1}{4}$ արշին բարձրութեամբ և երկու արշինից ունիւ լայնութեան ուրիշ երկու թաղթեր էլ են ձգուած, որոնք ամուսինների իրեն մահնակալ են ծառայում: Յզան գոմից ոչնչափ չի բաժանուած և խկապէս կենդանիների տաքութեամբ է տաքանում: Գոտրը սառնների միջի տարածութեան չափ և անմիջապէս նրա վերեւ հեռացնում բարձրանալով, վառարանի հանդէպ կաուրի և այդ բարձրութեան միջեւ մի փոքրիկ պատուհան է բացուած, որ այժմոս միայն սկսել են ապակի ձգել:

Յզան յատկացրուած է զխառարապէս աղամարդկանց, իսկ տունը՝ կանանց: Հիւրերը միշտ ընդունուած են օգայում և հրաւիրում հատել օճիսի գլուխը, երբ արդէն մի ներքնակ և մի բարձր ձգած են լինում սառլի վրայ:

Միայն հարուստ տներում սառնները ծածկուած են լինում քաշաներով և կամ կապերաներով:

ԵՆԱԼԵՂ.

Միմիան հարուստ տներն ունին ետղըրը—ամառուայ սենեակ: Ես սոփորաբար տաշած քարից, երբեմն բաւական բարձր լինում մի սենեակ է լինում, որ երկու կամ երեք պատուհան է ունենում ոչ թէ կաուրից, այլ պատի մէջ: Ամառն փոխարինելով օգային, ետղըրը ձգմուռ բաղրապին փակ է մնում, սրտհեան փառիկը թանց արժեւով չեն տաքացնում: